Միջոցառման ընթացքում առաջին դասարանցիները ներկայացրեցին անգլերեն լեզվով պատրաստած իրենց փոքրիկ ծրագիրը, որից հետո ասմունքեցին ութերորդ դասարանցիներ Երանուհի Առաքելյանը և Կարեն Մկրտչյանը:

Հատկապես հետաքրքրական էին ճեմարանականների կողմից Շեքսպիրի «Հուլիոս կեսար» և ճեմարանի ուսուցչուհի Բրիտա Ռոյի հեղինակած «Բժշկումը» վերտառությամբ թատերական ներկայացումները:

Հանդիսության վերջում եզրափակիչ խոսքով հանդես եկավ Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հայր Սուրբը նախ շնորհակալություն հայտնեց Բրիտա Ռոյին, որ արդեն տասնամյակներ շարունակ իր անմնացորդ ծառայությունն է բերում Մարդասիրական ճեմարանին, ապա ի մասնավորի ասաց. «Այս գեղեցիկ միջոցառումը և հատկապես դերասանական ձեր հմտությունները ևս մեկ անգամ փաստում են, որ բազմաթիվ շնորհալի երեխաներ կան ձեր մեջ, ուստի ամեն ինչ պետք է անել՝ Տիրոջ կողմից մեզ տրված շնորհները ճիշտ և տեղին օգտագործելու համար: Երբեք չպետք է մոռանաք, որ 185-ամյա պատմական կրթական հաստատության սաներն եք ամենքդ, որ ձեր ուսերի վրա կրում եք պատասխանատվություն և պարտականություն՝ բարձր պահելու համար Մարդասիրական ճեմարանի անունը՝ ի կատար ածելով նրա երախտարժան բարերարների կտակը»,- նշեց Հայր Սուրբն իր խոսքում:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 185-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Նոյեմբերի 10-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում կրկին տոնախմբություն էր: Ճեմարանի հանդիսությունների սրահում պատմական կրթօջախի 185-ամյակի տոնակատարությունների շրջանակում տեղի ունեցավ գլխավոր միջոցառումը, որն սկսվեց Տերունական աղոթքով և Հնդկաստանի ու Հայաստանի օրհներգերով: Այնուհետև ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը ճեմարանի հիմնադրման առիթով:

Բարիգալստյան խոսքով հանդես եկավ ճեմարանի տնօրեն տիար Ջեյմս Դայասը: Նա շնորհավորեց ամենքին հոբելյանի կապակցությամբ՝ անդրադառնալով ճեմարանի վերջին մեկ տարվա բուռն և նպատակասլաց գործունեությանը: Տնօրենը նաև իր ուրախությունը հայտնեց, որ հոբելյանական միջոցառմանը մասնակցում է նաև Արևմտյան Բենգալիայի նահանգապետ տիար Գոպալկրիշնա Գանդին՝ վերջինիս հրավիրելով իր սրտի խոսքն ուղղելու ներկաներին: Նահանգապետն ընդգծեց, որ թե՛ հնդիկ և թե՛ հայ ժողովուրդները հին քաղաքակրթություն ունեցող ազգեր են և պատմականորեն միշտ էլ սերտ կապերի մեջ են եղել, և ուր էլ եղել է հայ մարդը, պատիվ է բերել այդ երկրին, որի ակնհայտ վկայությունն են Հայոց Եկեղեցին և հայոց Մարդասիրական ճեմարանը: Տիար Գոպալկրիշնա Գանդին շնորհավորեց նաև ճեմարանի 185-ամյակի կապակցությամբ՝ հաջողություններ մաղթելով ճեմարանի ղեկավարությանն ու ճեմարանականներին:

Նահանգապետի ելույթից հետո ընթերցվեց Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանի շնորհավորական ուղերձը, ուր ՀՀ դեսպանը անդրադառնում էր հայ-հնդկական հարաբերություններին՝ ընդգծելով, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը միշտ յուրովսանն աջակից կլինի Մարդասիրական ճեմարանին և Կալկաթայի եկեղեցական խորհրդին:

Ելույթ ունեցավ նաև Կալկաթայի եկեղեցական վարչության ատենապետ տիար Հայկ Սուքիասը: Նա շեշտեց, որ ուրախալի է տեսնել օրեցօր բարենորոգվող ճեմարանը՝ վստահեցնելով, որ եկեղեցական վարչությունը միշտ զորավիգ է լինելու ճեմարանի բարգավաճմանը:

Նախկին ճեմարանականների անունից ներկաներին ողջունեց Անգլիայից այս առիթով եկած Մարդասիրական ճեմարանի նախկին սան, Բրիտանական գրադարանի Քրիստոնյա Արևելք բաժանմունքի ղեկավար Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը անդրադառնալով ճեմարանի պատմությանը և ճեմարանականի իր կյանքի փորձառությանը՝ ուժ և կորով մաղթելով ներկա ղեկավարությանն այդքան պատասխանատու առաքելության իրականացման գործում:

Որպես նախկին ճեմարանական՝ իր սրտի խոսքն ասաց նաև Իրանից ժամանած տիար Արարատ Եղիկյանը, որը վերջին տարիներին հաճախակի է այցելում ճեմարան: Նա շեշտեց, որ ուրախալի է տեսնել, թե ինչպես է անցնող տարում դրականորեն փոխվել ճեմարանը՝ իր զորակցությունը հայտնելով ճեմարանի ղեկավարներին:

Հանդիսության վերջում ամփոփիչ խոսքով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլզյուլյանը: Հայր Սուրբը շեշտեց, որ ճեմարանի հայաշունչ ոգով է պայմանավորված հնդկահայ գաղութի ապագան:

Հանդիսությանը մասնակցում էին Կալկաթայում Ռուսաստանի Դաշնության հյուպատոսը, Կիպրոսի Հանրապետության պատվո հյուպատոսը, Կալկաթայի եկեղեցական վարչության անդամները, քույր Եկեղեցիների բաձրաստիճան հոգևորականներ, հնդկահայեր, Իրանից ժամանած շուրջ 40 ուխտավորներ, նախկին ճեմարանականներ և բազմաթիվ հյուրեր:

Վերջում ճեմարանի բակում տեղի ունեցավ հյուրասիրություն:

ԿԱՏԱՐՎԵՑ ԿԱԼԿԱԹԱՅԻ ԴԱՎԹՅԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՆՈՐ ՆՆՋԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Նոյեմբերի 11-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրման 185-ամյակի տոնակատարությունները նշանավորվեցին մեկ այլ կարևոր իրադարձությամբ ևս. Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանը և նախկին ճեմարանական, Բրիտանական գրադարանի Քրիստոնյա Արևելքի բաժանմունքի ղեկավար Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը Դավթյան Աղջիկների դպրոցում կտրեցին փոքրերի համար նախատեսված վերանորոգված ննջարանի ժապավենը՝ պաշտոնապես բացված համարելով այն: Կալկա-